

## **ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը աշխատանքային այց կատարեց Ապարան խոշորացված համայնք**

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը Արագածի մշակույթի տանը հանդիպեց Ապարան համայնքի մի շարք բնակավայրերի բնակիչների հետ: Բնակիչներին հուզող հիմնական խնդիրը համայնքում շահագործվող ՀԷԿ-ի զգալի ազդեցություն էր գետի ջրերի որակի վրա: Բնակիչների պնդմամբ, վերջին ժամանակներում արձանագրված թունավորման դեպքերը ՀԷԿ-ի գործունեության անմիջական արդյունքն են: Այս հարցի շուրջ մարզպետ Դավիթ Գևորգյանը նշեց, որ փորձանմուշներն ուղարկվել են լաբորատոր ստուգման և միայն փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո է հնարավոր լուծել խնդիրը: Մարզպետը հավելեց նաև, որ տարիներ շարունակ ջրային ոլորտում տիրել է ամենաթող վիճակ, սակայն ստեղծված նոր իրավիճակում այլևս այդ կերպ չի կարող շարունակվել, ուստի լրջագույն խնդիր է Հայաստանում առկա ջրային ռեսուրսների բաշխման համակարգում փոփոխությունների իրականացումը:

Մարզպետը լսեց համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ բնակիչների մտահոգությունները և պարզաբանեց, որ խոշորացման գործընթացն այժմ կատեցված է, պետք է ուղղել խոշորացման առաջին փուլի սխալները, վերլուծել խնդիրները և նվազագույնի հասցնել առաջացած անհարմարությունները: Բնակիչները մարզպետին դիմեցին գազաֆիկացման, համայնքում մանկապարտեզ կառուցելու և հիվանդանոցի գործունեությունը վերականգնելու հարցերով:

Բնակիչների հետ հանդիպումից հետո մարզպետը Ապարանի համայնքապետարանում հանդիպեց համայնքի վարչական ղեկավարների հետ, լսեց յուրաքանչյուր բնակավայրում առկա խնդիրները, որոնք վերաբերում էին խմելու և ոռոգման ջրի ցանցերի ընդլայնմանը, ճանապարհների ոչ բարվոք վիճակին, բազմաբնակարան շենքի կառուցման շինարարական աշխատանքներին, բնակավայրերի որոշ հատվածներում գազատարերի բացակայությանը: Զննարկվեցին համայնքային նշանակության այլ հարցեր: Մարզպետը նշեց, որ առաջնային լուծում պահանջող խնդիրները արդեն իսկ իր ուշադրության ներքո են և դրանց իրականացման ընթացքը պետք է արագացնել, անհրաժեշտ է ստեղծել բնակության համար այնպիսի պայմաններ, որ ոչ միայն գյուղերը չդատարկվեն, այլև գնացածները վերադառնալ ցանկանան: